գաղթական եկած են Նադիր շահի ժամանակ, 15 տուն, 1157 թուին հաջրի։

ԺԸ. 13. 14. «Ստանալով տեղեկութիւն Նադիր շահի սպանման մասին դարբանդցիները չէին կամենում հնազանդել նրանից կարգած իշխանաւորին. գիշերը յարձակեցին Նաջաֆ Կուլի սուլթանի վրայ, որը պահպանում էր բերդը պարսիկներից կազմած զօրքով։ Երկու կողմից նշանաւոր վնաս կրելուց յետոյ՝ Նաջաֆ Կուլի սուլթանը պայման կռեց բնակիչների հետ՝ թողեց բերդը և վերադարձաւ Պարսկաստանն. իսկ դարբանդցիք փոխադարձ համաձայնութեամբ ընտրեցին խանի պաշտօնի համար Մամէտ Իսան խանին իմամ Ղուլի խանի որդւոյն, որը Դարբանդի Ուրչիեւներից էր։ 12 տարուց յետոյ Ղուբիայի Ֆաթալի խանը դրդուած մի քանի յայտնի դարբանդցիներից զօրեղ զօրքով եկաւ Դարբանդի վրայ և մնաց Կօրուխ անուանեալ քաղաքի արուարձանում։ Արեւը մայր մտնելուց ոմն Իմամ օղլի բայաթի ցեղից՝ 9 մարդկանցով 25ին բաբի էլ աւալի ամսի 1173ին հաջրէթի, քանդեց արուարձանի հանդէպի դուռը և մտաւ քաղաքը Փիր—Ալի—խանի։ Մամատ Իսան խանը դիմելով նորա մեծահոգութեանը՝ խնդրեց թոյլտուութիւն դուրս գալ Դարբանդից և գնալ Բագու։ Դարբանդի տիրելը բարձրացրեց Ֆաթալի խանին մինչեւ այն աստիճան՝ որ բոլոր Դաղստանի և Թաւսարանի տիրողները խոնարհեցին նորա առաջ։

« . . . Ֆաթալի խանը Դարբանդի բնակիչներին բաժանեց 4 մասի, և ամեն մի մասը յանձնեց առանձին բէկի կառավարութեան։ Այսպէս Կուրզու ցեղին յանձնեց Ջաֆար բէկին, Բայաթի ցեղը՝ Հաջի Միրզայ բէկին, Ռումիայի ցեղը՝ Բաջաբ Ալի բէկին, Խուրդանայի և Մկրեայի ցեղերն նրանց հարիւրապետներին—իւզբաշիներին։ Հարկաւոր դէպքում այս բէկերից մէկը կարգւում էր նայիբ, և այդ ժամանակ նրան էր ստորադրւում ամբողջ քաղաքը։ Ազգատոհմն այս վերջինների է իսկական Դարբանդի բէկերի ազգատոհմն։

« . . . 1221 թուին հաջ. ամենայն ռուսաց Կայսեր Ալէքսանդր Պաւլովիչի հրամանաւ երեւաց ռուսաց զօրքը գէնէրալ